ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ(ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Ռեկտոր՝ Է. Մ. Սանդոյան

№ 8 «04» ապրիլի 2025 թ.

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 Իրավագիտություն (առկա ուսուցում)

Դասիչ մասնագիտութուն՝ 042101.00.6 Իրավագիտություն

1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Բակալավրի կրթական ծրագիր, իրագործվող ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի կողմից **«042101.00.6 Իրավագիտություն»:**

Բակալավրի կրթական ծրագիրը իրագործվում է առկա կրթության ձևով:

Կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 4 տարի:

Բակալավրի կրթական ծրագրի ծավալը կազմում է 240 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը, տվյալ կրթական ծրագրի շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:

Իրավագիտության բակալավրի որակավորում շնորհվում է այն շրջանավարտներին, որոնք ունեն հիմնարար, համակողմանի և համակարգված գիտելիքներ, հմտություններ, ինչպես նաև կարողություններ՝ իրավագիտության տարբեր ոլորտներում մասնագիտական գործունեություն ծավալելու և (կամ) ուսումը շարունակելու համար:

Ծրագրի **նպատակն է** պատրաստել բարձր որակավորում ունեցող իրավաբաններ՝ ուսանողների շրջանում իրավագիտության ոլորտում խորը գիտելիքների ձևավորման, անձնական որակների, գործնական կարողությունների և հմտությունների ձևավորման միջոցով, որոնք անհրաժեշտ են հասարակության և պետության կողմից պահանջված հետագա ինքնուրույն իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահ, փորձագիտական-խորհրդատվական գործունեություն իրականացնելու համար:

Ծրագրի նպատակները՝

- Ուսանողների մոտ իրավագիտության ոլորտում գիտելիքների որակյալ և հիմնարար բազայի ձևավորում;
- Ուսանողների մոտ մասնագիտական գործնական հմտությունների ձևավորում և զարգացում;

- Ուսանողների մոտ իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձր մակարդակի ձևավորում, որն անհրաժեշտ է հետագայում մասնագիտական գործունեություն իրականացնելու համար;
- Համալսարանի շրջանավարտների ակտիվ մասնագիտական և սոցիալական գործունեության պատրաստակամության ձևավորում;
- Հետագայում աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մրցունակ մասնագետների պատրաստում:

2.2. Բակալվրի կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են ուսումնական և արտադրական պրակտիկաներ `

- Աշխատանքային պրակտիկայի ձևերը՝
  1. Ուսումնական պրակտիկա (Կուրսային աշխատանք)
  2. Արտադրական պրակտիկա
  3. Նախադիպլոմային պրակտիկա

2.3 Պետական ավարտական ատեստացիան ներառում՝

- Ավարտական աշխատանքի (դիպլոմային նախագծի) կատարում և պաշտպանություն

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտելիքները և հմտությունները ՝

Իրավագիտության բակալավրի աստիճանի հավակնորդը պետք է ունենա՝

1) Հայաստանի և այլ երկրների պետության և իրավունքի պատմության վերաբերյալ հիմնարար գիտելիք։
2) Իրավական համակարգի կառուցվածքի և գործառույթների, դրա և՛ քաղաքական ու տնտեսական համակարգերի փոխազդեցության, և՛ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար գիտելիք։
3) Իրավունքի ընկալման հիմնական հայեցակարգերի, իրավաստեղծման, իրավաբանական տեխնիկայի և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք։
4) Իրավակիրառման (մասնավորապես՝ իրավաբանական փաստերի վերլուծության, իրավաբանական որակման, իրավական նորմերի և պայմանագրերի մեկնաբանման), իրավական կոլիզիաները լուծելու կանոնների և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք։

5) Իրավունքի հիմնական ճյուղերի (մասնավորապես՝ սահմանադրական իրավունքի, վարչական իրավունքի և վարչական դատավարության, քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության, աշխատանքային իրավունքի, քրեական իրավունքի և քրեական դատավարության, էկոլոգիական իրավունքի, միջազգային հանրային իրավունքի, դրանց սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության և էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալհիմնարարևհամակարգվածգիտելիք:

6) Իրավական վեճերի լուծման և բանակցությունների վարման սկզբունքների ու տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք:

7) Մասնագիտական գործառույթների իրականացման համարանհրաժեշտ հարակից ոլորտների, ինչպես նաև՝ մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոնների և կոռուպցիային հակազդման վերաբերյալ գիտելիք:

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***

1. Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքներն առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրների լուծման համար:

2. Կարող է ինքնուրույն կազմել և մշակել իրավական փաստաթղթեր, տալ իրավաբանական եզրակացություններ, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն:

3. Կարող է բանակցություններ վարել, ներկայացնել ֆիզիկականնիրավաբանականանձանց,պետությանանհամայնքիիրավունքներնու օրինականշահերը:

4. Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել իրավական նորմերը և պայմանագրերը:

5. Կարող է օրինական մեթոդներով որոնել և գտնել վերաբերելի դատական և իրավական այլ ակտեր կամ այլ տեղեկություններ, օգտագործել դրանք մասնագիտական ոլորտում խնդրի լուծման համար ,ինչպես նաև՝ հետևել իրավական ակտերի փոփոխություններին:

6. Կարող է վերհանել իրավական խնդիրը, տարբերակել գործի լուծման համար էական փաստերը, որոշել կիրառել իիրավական նորմը և կիրառել փաստերի նկատմամբ, եզրահանգումանել գործի լուծման վերաբերյալ:

7. Կարող է արագ կողմնորոշվել իրավական խնդիրներ (այդ թվում՝ անկանխատեսելի) լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը, այդ թվում՝ առաջ քաշելով հակափաստարկներ:

- *ընդհանրական իմացական հմտությունները՝*
  1) Կարող է դրսևորել քննական և փաստարկված վերլուծական մոտեցում՝ իրավական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար:
  2) Կարող է մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

1. ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

1. Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու լիարժեք մասնագիտական գործունեություն:
2. Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրելու օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, մասնագիտական գրականությունը և ինտեգրվելու հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին:
3. Ունակ է՝ ուսումնառության և (կամ) աշխատանքի ընթացքում կատարելու առաջադրանքներ, ցուցաբերելու անհրաժեշտ ինքնուրույնություն և ստանձնելու պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս:
4. Ունակ է՝ աշխատելու թիմում:
5. Ունակ է՝ անձնական օրինակով նպաստելու իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
6. Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

1. **Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները**

Ծրագրի շրջանավարտները կարող են արդյունավետ աշխատանք կատարել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դատական իշխանության, ինքնակառավարման մարմինների աշխատակազմերում, իրավապահ մարմիններում, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում, իրավախորհրդատվական (փաստաբանական) գրասենյակնե-րում, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում, միջազգային կառույցներում ու կազմակերպություններում՝ զբաղեցնելով իրավաբանական բարձրագույն կրթություն պահանջող ցանկացած հաստիք:

<u>Իրավաստեղծ գործունեություն</u>

Նորմատիվ իրավական ակտերի և լոկալ ակտերի մշակում՝ պահպանելով իրավաբանական տեխնիկայի կանոնները;

<u>Իրավակիրառ</u>

իրավական փաստերի հաստատում և հետազոտում;

իրավունքի համապատասխան նորմի ընտրությունը և իրավական նորմերի իրականացման հետ կապված գործողությունների կատարում;

իրավակիրառ ակտերի և այլ փաստաթղթերի կազմում:

<u>Իրավապահ</u>

օրինականության, իրավակարգի, անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովում;

իրավախախտումների կանխարգելում, բացահայտում:

<u>փորձագիտական խորհրդատվական</u>

իրավունքների պարզաբանում, իրավական հարցերի վերաբերյալ խորհրդատվություն;

նորմատիվ իրավական ակտերի, փաստաթղթերի իրավական փորձաքննության իրականացում:

2. Կրթական ծրագրի պահանջարկը.

Ծրագիրն ուղղված է իրավագիտության ոլորտի մասնագետների պատրաստմանը, որոնք մրցունակ են Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան աշխատաշուկաներում, տիրապետում են անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներին, կարողություններին և հմտություններին, պատրաստ են մասնագիտական գործունեություն իրականացնելու:

Կրթական ծրագրի պահանջարկը հաստատվում է դրանում այնպիսի առարկաների առկայությամբ, որոնք արտացոլում են իրավաբանական ծառայությունների շուկայի ժամանակակից միտումները և բավարարում են այս ոլորտում գործատուների պահանջները:

Կրթական ծրագրի ավարտին շրջանավարտները կկարողանան լուծել վեճերը քաղաքացիական, ընտանեկան, հողային, ժառանգական, կորպորատիվ, առողջապահական, աշխատանքային, վարչական գործերում, ինչպես նաև կկարողանան մասնագիտորեն պաշտպանել մարդկանց իրավունքները քրեական դատավարության բոլոր փուլերում, բացահայտել ի կանխել հանցագործությունների կատարումը: